

Գրախոսություն

Թամարա Բորիկի Անդրեասյանի՝ «Լևոն Բաշալյանը արևմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում» թեմայով ատենախոսության մասին:

Լևոն Բաշալյանի ստեղծագործությունը իր ուրույն տեղն ու դերն ունի 19-րդ դարի 80-ականների արևմտահայ իրապաշտական գրական շարժման համապատկերում: Պատահական չէ, որ նրա ստեղծագործությանն անդրադարձել են ոչ միայն այն գրականագետները (Ս. Մանուկյան, Հ. Պարիկյան, Վ. Կաքեսյան և այլք), որոնք քննել են գրողի ստեղծագործությունը այս կամ այն դիտանկյունից, այլև բազմաթիվ այլ հետազոտողներ, որոնք առհասարակ զբաղվել են ժամանակի գրականության, նրա ոլորտում այլ ներկայացուցչի ստեղծագործության քննությամբ (Կ. Դանիելյան, Ս. Դանիելյան, Ալ. Շարուրյան, Ա. Չոպանյան, Գ. Ազնաուրյան, Գ. Հակոբյան, Ա. Մակարյան և այլք):

Այս առումով միանգամայն հասկանալի և հիմնավորված է, անշուշտ, ատենախոսի հետաքրքրությունը թեմայով, մասնավորապես, եթե նկատի ենք առնում նաև այն մոտեցումը, որով նա փորձել է մեկնաբանել ինդիքը. Թամարա Անդրեասյանը, դաստիարակվելով ձևակերպումից, նորոգում է ունեցել ներկայացուցել ոչ միայն Լ. Բաշալյանի գրող-նորավիպագրին, ինչը արվել է նախորդ սերնդի գրականագետների կողմից և լավ է արվել, այլև Բաշալյանի գեղագետին, գրականության տեսաբանին, խմբագրին և ազգային գործչին առհասարակ: Եվ, միանգամից ասենք, հիմնականում հաջողել է: Նա աշխատանքը ներկայացրել է ներածության, երկու գլուխներ, եզրակացություններ կառուցվածքում, ինչը չի հակասում ԲՈԿ-ի պահանջներին:

Նա ուսումնասիրության առարկան համարել է արևմտահայ 80-ականների իրապաշտական գրական շարժման համապատկերային դիտարկումը: Իրանով նա փաստարկում-հիմնավորում է շարադրանքի ընթացքում Արփ. Արփիարյանի, Միպիլի, Հրանդի, Գր. Զոհրապի ստեղծագործություններին անդրադառնալը: Ներածության մեջ առանձնացվել-հիմնավորվել են նաև ուսումնասիրության

նպատակն ու հիմնախնդիրները, գիտական նորությունն ու նորույթը, տեսական-մեթոդաբանական հիմքերը և արդիականությունը, կառուցվածքի ընտրությունը:

Բուն շարադրանքում Լ. Բաշայանի գեղարվեստական և հրապարակախոսական-գնահատական ժառանգությունը քննելիս ասենալիս առանձին առանձին և մի շարք ընդհանրացումներով և թարմ եզրահանգումներով: Այսպես արևմտահայ 80-ականների գրական շարժման ակունքները նա տեսնում է Հ. Պարոնյանի ստեղծագործություններում, «Արևելք», «Մասիս» պարբերականների շուրջ հավաքված սերնդի թարմ մտածողության մեջ (էջ 14, 16), նրանց՝ ժամանակի ֆրանսիական գրականության հանդեպ ունեցած մեծ հետաքրքրությամբ և իմացությամբ:

Թ. Անդրեասյանի ուշադրությունից չի վրիպել նաև նույն սերնդի վերաբերմունքը ռուս դասական գրականության հանդեպ: Մասնավորապես նա առանձնացնում է Արփ. Արփիարյանի «Միխայիլ Լերմոնտով» հոդվածը, որը շրջադարձային դերակատարություն ունեցավ դեպի ռուս գրականությունն ունեցած վերաբերմունքի հարցում 80-ականների գրական սերնդի մեջ (էջ 23):

Առանձին դեպքերում նոր, թարմ և համոզիչ են ատենախոսի քննաբանական մտտեցումներն ու եզրահանգումները Լ. Բաշայանի այս կամ այն գործի վերաբերյալ: Այսպես, համոզիչ է Լ. Բաշայանի գեղագիտական ըմբռնումներին վերաբերող նրա դիտարկումը, թե՛ Լ. Բաշայանը «փորձում է ի մի բերել գրողին ներկայացվող այն հիմնական պահանջները, առանց որոնց անհնար կլինի «գոհացում տալ» նրանց «գույրավոր» փայլագլին»:

Եվ ասվածը հիմնավորելու համար մեջբերում է Լ. Բաշայանի մի դատումը «Գրել է առաջ» հոդվածից. «Պետք է նախ դիտել, լարուած ուշադրութեամբ դիտել չորս կողմը, բնութեան ու ընկերութեան մեջտեղ դրած տեսարանները բաղդատել իրարու հետ, անցնող երեւոյթի մը, խուսափուկ պատկերի մը գծերը որոշել, անոնց էութեանը թափանցել, անոնց մէջ գտնել որոշիչ հանգամանքները, մասնաւոր յատկութիւնները, որոնք նոր են ամեն դիտողի համար, ու խորհրդածել անոնց վրայ, եզրակացութեան մը հանգիլ» (էջ 46):

Լավ է քննված նաև Բաշայանի «Հացը» պատմվածքը, մի շարք այլ գործեր: Ատենախոսին հաջողվել է նույնիսկ բանասիրական հետազոտության արդյունքում փաստական ճշգրտումներ անել: Բանասիրությանը հայտնի չի եղել Լ. Բաշայանի՝ «Մյուսաբանությունը և դասաբանությունը» պատկերի հրատարակության տեղն ու թիվը, ինչը ճշտել է Թ. Անդրեասյանը՝ «Մասիս», Կ. Պոլիս, թիվ 395:

Մեր համոզմամբ՝ ատենախոսության ամենահաջողված հատվածը երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխն է՝ «Կերպարների հոգեբանական զարգացումները» վերտառությամբ: Հենվելով Զ. Ֆրեյդի, Կ. Յունգի, Լը Բոնի, Յու. Հովականյանի հոգեվերլուծական աշխատությունների վրա՝ Թ. Անդրեասյանը փորձել է նրանց նշած իրողությունները դիտարկել նաև Լ. Բաշայանի գրական հերոսների ներաշխարհային դրսևորումներում (էջ 128-150):

Վերը սավաճի կողքին, սակայն, դժբախտաբար առկա են մի շարք իրողություններ, որոնք ստվերում են կատարված աշխատանքը և լրջորեն են ստվերում:

Առավել աչքի ընկնողն այն է, որ ատենախոսը որևէ կերպ չի ազատվում գեղարվեստական, և ոչ միայն, գործը վերապատմելու գայթակհությունից: Երևույթը տեսանելի է գրեթե ցանկացած գործի քննության ընթացքում և էջեր նշելը այս դեպքում նպատակահարմար չէ:

Դա արդարացված կլիներ, եթե կիրառվեր Լ. Բաշայանի որևէ պակաս ծանոթ ստեղծագործության պարագայում, սակայն, ոչ մի կերպ արդարացնելի չի թվում, ասենք «Հնայաթավիլ», «Խաչախաչիլ», «Ղալաթիա «րևալի»», «Մյուզնիլի վարպետի», «Նոր զգեստի» և մնացած շատ հայտնի գործերի պարագայում, որոնք բազմիցս քննարկվել են և հայտնի են ընթերցողների լայն շրջանակներին: Այս դեպքում ատենախոսը որևէ նորույթ չի բերում և վատահաբար չի բերում:

Վերը նշեցինք, որ թեմայի ընտրությունը ատենախոսին հնարավորություն է տվել, ավելին՝ պարտադիր է դարձրել Լ. Բաշայանի գրական ժառանգությունը քննել մյուս արևմտահայ 80-ականների ստեղծագործության համապատկերում: Մեզ այնպես է թվում, որ Զոհրապի, Միայիլի, Հրանդի, Արփիարյանի հետ զուգադրական քննությունը

շատ ավելի կշահեր, եթե թ. Անդրեսայանը գեթ մեկ անգամ հիշատակեր Երուխանի անունը: Կարծում ենք, որ Բաշալյան-Երուխան համեմատական քննությունը առավել տեսանելի կդարձներ ժամանակի սոցիալ-հոգեբանական խնդիրների հանդեպ 80-ականների սերնայի ընթացիկական մասնցումները: Մյայն մեկ օրինակ. Բաշալյանի «Կրիան» մերժված և սփոփանք փնտրող հոգիների կենսական ձգտումների վերաբերյալ անհամեմատ ավելի հոգեհարազատ է Երուխանի «Կուզը» նովելի հերոսի ներաշխարհային ձգտումներին, քան, ասենք, Միսյիլի կամ Հրանդի որևէ այլ ստեղծագործություն:

Նույնը կարելի է պնդել համապատասխանաբար «Սյուզենիի վարպետ» և «Թաշկինակը» գործերի մասին և այլն: Լ. Բաշալյանի գործերի քննության ընթացքում չի երևում ատենախոսի անհատական մոտեցումը: այնպես է թվում, թե նրա բոլոր գրվածքները կատարյալ են, և թույլ գործեր չիք: Ասենք՝ «Նոր զգեստը» որպես անօգ ծնողի ողբերգություն, մեր գրականության անկրկնելի գործերից է և հաստատ համեմատելի չէ, ասենք, «Դրացուհին» գործի հետ: Անհատական, ինքնուրույն մոտեցում չկա նաև համեմատվող հեղինակների գրական արժանավորությունը տարբերակելիս:

Միսյիլը հաստատ Բաշալյան չէ, իսկ եթե անգամ է՝, ապա դա պետք է փաստարկվեր ատենախոսի կողմից: Օր. էջ 110-ում կարդում ենք . «Մառի Միսյանի հետ («Այս է եղեր» նորավեպի հերոսը-Ս. Ս.) հետ զուգահեռվում է Արփ. Արփիարյանի «Ապուշը» պատմվածքի (հեղինակը այն անվանել է վեպ) հերոսուհին՝ Փոռթյունեն, ով հանուն հարստության ու դիրքի՝ սկզբում ստանում է սեփական ծագումը, փոխելով հայերեն անուն-ազգանունը, ֆրանսերեն ձև ու հնչողություն սալավ, ևնստ ևալազատ ծնալնկլին (վախա՞մ Լ-Ս.Ս), ավելի ուշ նաև լյուն նվլվված ամուսնուն՝ Լևոնին՝ հայտնվելով իրենց ընտանիքի քավոր և բարերար համարվող Մկրտիչ Մինանյանի անկողնում»:

Թվում է, թե նկատվել են աներկբայելի ընդհանրություններ, նաև նշվում են տարբերություններ երկու ստեղծագործությունների միջև: Բայց դրանք ինչո՞վ են

պայմանավորված, երկու գրողների մտածողության ընդհանրություններով, միննույն գեղագիտական հավատամքով, թե՞ ազդեցության արդյունք է, բացատրություն չկա: Աշխատանքում իսպառ անդրադարձ չկա իրապաշտական գրական ուղղության պիսնայուման կերպարին, այսինքն՝ սպավապայություն և ստեղծվում, թե՛ բարձր գլխունկի մոտ առկա է ընդհանրական մտածողություն՝ մինչդեռ Լ. Բաշայանի մոտ, առանձին դեպքերում իրապաշտությանը (ռեալիզմին) զուգահեռ նկատելի են նաև բնապաշտական (նատուրալիզմ) տարրեր: Օրինակ՝ նույն «Կրիան» նովելում: Նման հակվածություն ունի նաև Երուխանը («Համրին վրեժը», «Մեռելներուն ջրկիրը», «Եվնիկե» և այլն), մինչդեռ դրանք առկա չեն ատենախոսի համեմատած գրողների երկերում:

Ատենախոսը պարտավոր էր, կարծում ենք, քննության ենթարկել Բաշայանի ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները: Այդ դեպքում պատմվածքը չէր շփոթի նորավեպի հետ, իսկ «Ղայաթիո «րեսոր»» կրնութագրվեր ոչ թե պատմվածք, այլ վիպակ, ինչպես որ իրականում է:

Աշխատանքում առկա են նաև ոճական անհարթ ձևակերպումներ. Օր. «Լ. Բաշայանը հանդիսանալով արևմտահայ ութսունականների գրական շարժման կարևոր օղակներից մեկը» (85), կամ «Լ. Բաշայանը խնդրին անդրադարձել է իր մի շարք գործերում, ... ուր **ցուցահանել է** սոցիալական տարաբնույթ խնդիրների **հարթակում** զոհ դարձող մարդկանց ցավն ու տառապանքը» (85): Ինչու՞ ցուցահանել կամ խնայունկի հարթակում: Յուցանան՞, թե՞ բացահայտել, ցույց սուլ, ներկայացնել և այլն: Այսպիսի օրինակները, դժբախտաբար, եզակի չեն:

Երբեմն էջեր են զբաղեցնում այլ հեղինակների ստեղծագործությունների վերապատմումները (օր. էջ 116-Արփիարյանի մասին), ինչը հնարավոր չի դարձրել Լ. Բաշայանին ավելի հանգամանալից ներկայացնելը:

Մեզ հաջող չի թվում նաև աշխատանքի առաջին գլխի ձևակերպումը՝ «Լևոն Բաշայանը՝ արևմտահայ 80-ականների գրական շարժման շառավիղներում»: Որո՞նք են այդ շարժման շառավիղները, գոնե շարադրանքի ընթացքում չի բացահայտվում:

Մեծ ծավալ են կազմում նաև գրական ստեղծագործություններից կատարված մեջբերումները, որոնք տեղ չեն թողնում տեսական դատումների և ընդհանրացումների համար:

Չնայած վերը շարադրվածին՝ կարծում ենք՝ կարելի է հայցալսյին շնայունը իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Արարատ

Գրախոս Բ.Գ.Թ. Ս. Սրապիոնյան

*Ա. Սրապիոնյանի
ԵԳԿ ժյուրի*



*Արարատյանի Գրախոսության կողմից հաստատված է
Արարատյանի Գրախոսության կողմից*